Ոչ պաշտոնական թարգմանություն

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Օգոստոսի 29-31 Սևանում ԵԱՀԿ-ի Երևանյան գրասենյակը կազմակերպեց կոնֆերանս՝ «Ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովման մասին Եվրոպական Շրջանակային Կոնվենցիան և նրա իրավական և գործնական կիրառումը Հայաստանում» թեմայով:

Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցեցին ՀՀ օրենսդրական և գործադիր իշխանության մարմինների աշխատակիցները, գիտնականներ, իրավաբաններ, Հայաստանում բնակվող բոլոր ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ, պետական և անկախ փորձագետներ, ոչ կառավարական իրավապաշտպան և միջազգային կազմակերպություններ, լրագրողներ (մասնակիցների ցուցակը կցվում է):

Կոնֆերանսի աշխատանքները ընթացան վեց նիստերով, ուր առանձին-առանձին հատվածներով քննարկվեցին հետևյալ հարցերը՝ միջազգային չափանիշները և ազգային փոքրամասնությունների պաշտպանության մեխանիզմը, Հայաստանի օրենսդրության համապատասխանելիությունը այդ չափանիշներին, ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունները և դրանց կատարումը պետական մակարդակով, ազգային փոքրամասնության ներկայացչությունը պետական և տեղական իշխանությունների ոլորտում, մշակույթ և կրոն, լեզու և կրթություն, էթնիկ հայրենիքի հետ կապ ստեղծելու պայմաններ, ազգային փոքրամասնությունների Համագումարի և նրանում ընտրված Համակարգող Խորհրդի լեգիտիմությունը, վերջինիս աշխատանքը, դերը և ֆունկցիաները (կոնֆերանսի ծրագիրը կցվում է):

Կոնֆերանսում հնչած զեկույցները և ելույթները կհրատարակվեն առանձին գրքով, ինչը հնարավորություն կտա ծանոթանալու Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների այսօրվա վիճակի լիակատար պատկերին: Այդ նյութը կնպաստի ՀՀ ազգային փոքրամասնությունների խնդիրները ուսումնասիրելուն և ընկալմանը:

Կոնֆերանսի մասնակիցները՝

- Ձգտելով նպաստել ժողովրդավարական քաղաքացիական հասարակության զարգացմանը, նրա անդամների փոխըմբռնման և ներդաշնակ զարգացման համար հավասար հնարավորությունների տրամադրմանը,
- Գիտակցելով, որ միջմշակութային, միջէթնիկ կապերի զարգացումը, փորձի և տեղեկատվության փոխանակումը և ժողովրդական դիվանագիտության հետագա զարգացումը կնպաստի հասարակության առաջընթացին,

- Վճռականություն հայտնելով համագործակցել փոխըմբռնման, բարի կամքի և խնդիրները լուծելու արդյունավետ միջոցների հայտման սկզբունքների հիման վրա,

- Հաշվի առնելով երկրում պատմականորեն ստեղծված իրավիճակը,

- Փաստելով որոշակի խնդիրների գոյությունը, քննարկելով նրանց լուծման կոնկրետ և իրական միջոցները,

- Որոշելով անշեղորեն հետևել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության սկզբունքներին և չափանիշներին, ինչպես նաև նրանց ինքնության պահպանման և զարգացման համար հավասար հնարավորությունների ստեղծմանը,

- Գիտակցելով, որ տարբեր մշակույթների և արժեքների առկայությունը սեփական տարածքում հարստացնում է ցանկացած պետություն,

- Հաշվի առնելով յուրաքանչյուր ազգային փոքրամասնության վիճակը և ամբողջ երկրի վիճակը ընդհանուր առմամբ

Համաձայնվեցին հետևյալի մասին՝

- Ընտրել խմբագրական խորհուրդ Կոնֆերանսի Եզրափակիչ Արձանագրության կազմման և կոնֆերանսում հնչած ազգային փոքրամասնությունների պաշտպանության և ապահովման ոլորտում պետական կառույցներին ուղղած խնդիրների լուծման հանձնարարականների ձևակերպման համար,

- Լիազորել Համակարգող Խորհրդին նախապատրաստել սույն Արձանագրության և հանձնարարականների ընդունումը, ստորագրումը և դրանք կյանքի կոչելու հետագա գործողությունները:

- Ձևակերպել հիմնավորված, խնդիրների համատեղ լուծմանը նպաստող առաջարկություններ և հանձնարարականներ բովանդակությամբ դիմումներ ՀՀ Նախագահին, Ազգային Ժողովին և Հանրապետության կառավարությանը:

- Դիմել ԵԱՀԿ-ի Երևանյան գրասենյակին միջնորդ հանդիսանալու խնդրանքով՝ Համակարգող Խորհդի պետական կառույցների միջև հանձնարարականների իրականացման նպատակով երկխոսության հաստատմանը և արդյունավետ հետագա համատեղ աշխատանքների կազմակերպմանը:

- Սույն Արձանագրությունը ստորագրելու պահից մեկ ամիս ժամկետում խմբագրել բոլոր պաշտոնական դիմումները և փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են հանձնարարականները հիմնավորելու և այն ուղարկել Հայաստանի կառավարության համապատասխան մարմիններին:

Արձանագրությանը կցվում են մշակված հանձնարարականներ:

Սույն Եզրափակիչ Արձանագրությունը ուղղարկվում է՝

ՀՀ Նախագահ պրն. Ռոբերտ Քոչարյանին
ԱԺ-ի նախագահին

Սահմանադրական դատարանին
ՀՀ Վարչապետին

ԵԱՀԿ-ի Երևանյան գրասենյակ և այլ միջազգային կազմակերպություններ
Զանգվածային լրատվամիջոցներրին

Հանձնարարականներ

Իրավական դաշտ՝

- ՀՀ Սահմանադրության նոր տեքստում ամրագրել դրույթ՝ ազգային փոքրամասնության իրավունքների պաշտպանության մասին,
- Սահմանադրական բարեփոխումներ իրականացնելիս համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրության թիվ 15 և 37 հոդվածները Եվրոպական Շրջանակային Կոնվենցիայի դրույթներին:
- Համապատասխնեցնել ՀՀ օրենսդրական և այլ իրավական նորմատիվային ակտերը ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ-ի կոցմից վավերացված միջազգային իրավական փաստաթղթերի դրույթներին:
- Համապատասխանեցնել ՀՀ օրեսդրությունը միջազգային նորմերին՝ ՀՀ իշխանական կառույցներում ազգային փոքրամասնությունների ընդգրկվածության հարցում:
- Ներգրավվել Համակարգող Խորհուրդը ազգային փոքրամասնությունների օրենքի մշակման աշխատանքներին՝ համաձայն միջազգային պրակտիկայի՝ այլընտրանքային օրինագծի պատրաստման կամ ԱԺ կողմից մշակված օրինագծի փորձագիտության գործում:

Լեզու և կրթություն

- Մշակել պետական քաղաքականություն՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին կրթություն ապահովելու, պահպանման և զարգացման, դասագրքերի հրատարակման, մանկավարժական կադրերի պատրաստման, ուսումնա-մեթոդական ծրագրերի մշակման:
- Փոփոխություններ կատարել ՀՀ լեզվի և կրթության մասին օրեքների մեջ՝ հաշվի առնելով ազգային փոքրամասնությունների և փախստականների շահերը և իրավունքները:
- Ապահովել պետական աջակցություն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին բարձրագույն կրթություն ստանալու համար

Մշակույթ

- Պետականորեն աջակցել ազգային փոքրամասնությունների մշակույթների պահպանմանն ու զարգացմանը
- Ապահովել երկկողմանի դիվանագիտական պայմանավորվածությունների հիման վրա աջակցություն Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնություններին իրենց էթնիկ հայրենիքի հետ կապեր հաստատելու գործում:

Համակարգող Խորհուրդ

- Որոշել ազգային փոքրամասնությունների Համակարգող Խորհրդի իրավական կարգավիճակը
- Ներգրավել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին Համակարգող Խորհրդի Կանոնադրության մշակման գործում: